Եւ այսպէս, մի շարք ուրիշ պետութիւններ եւս:

Ցիշե՞լ որ, պատմական նպաստաւոր դէպքերի հետեւանքով քաղաքական անկախ գոյութիւն ստացած մերձբալտեան երկիրներից մէկերկուսը եւս տարածութեամբ ու բնակիչների թուով շատ հեռու չեն այսօրուան Հայաստանի համեմատութիւնից:

Ալբանիան ե՛ւ մէկ, ե՛ւ միւս կողմից (30 հզ. քառ. քմ. եւ 900 հազար բնակիչ) յար եւ նման է մեր երկրին: Նման՝ նաեւ այն տեսակէտից, որ նրա հողերի եւ ցեղակիցների կէսն եւս այսօր իրենից դուրս են, կցուած դրացի պետութիւններին:

Ինչպէս միացեալ Ալբանիան, այնպէս նաեւ միացեալ Բուլգարիան եւ Ցունաստանը տակաւին սպասում են իրենց ապագային:

Ցիշե՞լ նաեւ այն, թէ մի շարք պետութիւններ իրենց քաղաքական ինքնուրոյնութեան արշալոյսին բնակիչների թուով, տարածութեամբ եւ ուրիշ պարագաներով շատ եւ աւելի երջանիկ չեն եղել, ոչ էլ դուցէ պակաս անդամներ յուսախաբութիւններ կրել, քան մենք:

Ի՞նչ պիտի ասուէր այժմ, եթէ 20–30 տարի առաջ յոյներ, ռումաններ եւ սերբեր դրոնուած եւ «աշխարհակալութիւն», «արկածախնդրութիւն» որակած լինէին բոլոր այն հայրենասէրների ձգտումները, որոնք ժամանակին առաջադրել եւ հետապնդել են այսօր արդէն իսկ իրականութիւն դարձած միացումը եւ ամբողջացումը սեփական երկիրների:

Ըստ էութեան տարբեր չէ նաեւ մեր քաղաքական ուղեգիծը, որ ձգտում է դէպի Միացեալ Հայաստան: Ծանր է, հարկաւ, անբախդատելիօրէն ծանր՝ մեր իրականութիւնը, հանդէպ ուրիշների, օրինակ բալկանեան ազգերի: Եւ սակայն ազգային իդէալի էութիւնը եւ նրա արդարացիութիւնը բնաւ չէ փոխուում դրանով: Խօսք կարող է լինել ուրեմն միայն առաջադրուած նպատակին հասնելու միջոցների մասին: Երբ ուրեմն մի անդամ ընդունենք քաղաքական այդ ճշմարտութիւնը, թէ Հայաստանն է, եւ ոչ մի այլ երկրամաս, մեր ազգային (միշտ էլ՝ պետական իմաստով հասկացուած) քաղաքականութեան առարկան, երբ մեզ հետ միասին ուրիշ հոսանքներ եւս ընդունին, թէ Միացեալ Հայաստանի մէջ միայն կարող է ամբողջացած սեպուիլ դա, այն ժամանակ էլ կարող ենք լրջօրէն վիճել այն մասին թէ՝ ինչպէ՛ս, ի՞նչ միջոցներով եւ եղանակով հետապնդելու է նրա իրականացումը:

Ամենից առաջ եւ կարեւորագոյնը ուրեմն գաղափարի յաղթանակի ապահովումն է, յուսով եւ հաւատով նրան կառչելու անհրաժեշտութիւնը: Եւ թւում է, թէ հայ քաղաքական մտքի ժամանակաւոր տեղատուութիւնից յետոյ կարծէք թէ սկսում է, այս մարդի մէջ եւս, մակընթացութեան շրջան: Միացեալ Հայաստանի գաղափարը, որ գերազանցօրէն համազգային նշանախօսք է, ըստ երեւոյթին, տակաւ դիրքեր դրաւել է սկսել, Հ. Յ. Դաշնակցութիւնից դուրս, ուրիշ խմբակցութիւնների շարքերում եւս:

Դժուարը առաջին քայլն առնելն է, յաջորդը ինքնիրեն կը հետեւի:

Աւելին դեռ: Մենք տածում ենք այն հաւատը, թէ վաղ կամ ուշ Միացեալ Հայաստանի գաղափարը իւրացնեն պիտի անդամ բանիմաց հայ բոլշեւիկները: Ոչինչ, թէ նրանք այսօր փարսախներով հեռու են փախչում դրանից: Չէ՞ որ 15–20 տարի առաջ նրանք ոչ պակաս մոլեգնոտութեամբ վանում էին իրենցից «ազգ», «հայրենիք», «անկախութիւն», «ֆեդերացիա» եւ նման նշանախօսքեր եւս, իսկ այսօր հոլովում են ամէն առթիւ: Ոչինչ, եթէ այդ գաղափարները խաթարուած, աղճատուած են բոլշեւիկեան բառարանում:

Բայց չէ՞ որ ժամանակը ամենակարող է եւ ընդունակ՝ սրբագրութիւններ մտցնելու անդամ բոլշեւիկեան խօսքերի եւ գործերի մէջ:

VI

Եւ սակայն, բաւական չէ ասել, թէ մեր ազգային քաղաքականութեան առարկան է Հայաստանը՝ ամբողջացած ու միացած ձեւով:

Մեր խօսքը ազգագրական Հայաստանի, հայ հայրենիքի սեփական դաւակներով բնակեցրնելու ծրագրի շուրջը չէ միայն: Հարկաւ, դա հիմն է առհասարակ ամէն մի ազգային քաղաքականութեան, նրա այբուբենը, բայց ոչ՝ ամէն ինչ: